HETQ.AM-ի լրագրող Տիրայր Մուրադյանին
Էլ.փոստ՝ tirayrmuradyan@gmail.com

Հարգելի պարոն Մուրադյան,

Ձեր 12.12.2023թ. հարցման վերաբերյալ նախնառաջ անհրաժեշտ եմ համարում նշել, որ, ես՝ Հայկ Եսայանս, չունենալով Ձեր կողմից ներկայացված հարցմամբ տեղեկատվություն տրամադրելու որևէ պարտավորություն, այնուամենայնիվ հետագայում հավաստի տեղեկատվության բացակայության պատճառով սխալ հետևությունների կամ ենթադրությունների վրա հիմնված լուսաբանումներից կամ հրապարակումներից խուսափելու համար ցանկանում եմ հայտնել հետևյալը.

ա) Մինչ կոնկրետ հարցադրումներին անդրադառնալը՝ կարևոր եմ համարում նշել, որ Ձեր հարցման առաջին պարբերության մեջ նշվածի մասին տեղեկացա հենց Ձեր հարցումից: Այսինքն՝ մինչ այդ, ես տեղեկացված չէի, թե 2021թ. ՀՀ կառավարության որոշման, թե որպես ԵՏՄ շրջանակում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ազգային օպերատոր «Հեռանկարային տեխնոլոգիաների զարգացման կենտրոն-Արմենիա» ՍՊ, «Ցենտռ ռազվիտյա պերսպեկտիվինիխ տեխնոլոգիյ» ՍՊ և «ԱյՄարկ» ՍՊ ընկերությունների ընտրվելու մասին:

բ) Հարցման երկրորդ պարբերության, այն է՝ դրանում նշված ընկերությունների և դրանց մասնակիցների և մասնակցության չափաբաժինների վերաբերյալ տեղեկատվության մասով որևէ դիտարկում չունեմ, քանի որ, այդ տեղեկությունները հրապարակային են և առկա են ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պաշտոնական ինտերնետային կայքում: Միակ նկատառումս, հաշվի առնելով հարցադրումները, այն է, որ «Նորդերն Թերուար» ՍՊԸ իրական շահառուներ Հայկ և Ալեքսանդր Եսայանների մասին նշումը, և «Ֆրուկտուս» ՍՊԸ կամ դրա մասնակցի վերաբերյալ չնշելը պայմանավորված է առկա և գործող օրենսդրական կարգավորումներով. մասնավորապես՝ *«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով իրական շահառուն ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի)* ***20 և ավելի տոկոսին*** *կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում:*

Անդրադառնալով կոնկրետ հարցադրումներին՝ նշեմ, որ.

- 1-ին հարցադրման մասով ճիշտ է, որ ես և Նարեկ Սեդրակի Եսայանը հանդիսանում ենք ազգականներ,
- 2-րդ հարցադրման մասով, պատասխանս և պարզաբանումս առկա է արդեն սույն գրության «ա» կետում:

Հարգանքով՝

Հայկ Եսայան

Digitally signed by
HAYK YESAYAN 1904810098
Date: 2023.12.18 16:34:01 mID